


**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
**ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Սանտրյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
 հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. ասցեն՝ [board@ysu.am](mailto:board@ysu.am), [www.ysu.am](http://www.ysu.am)

№ 001 «06» նոյեմբերի 2021 թ.

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**«Երևանի պետական համալսարան»**  
**հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝**  
**2021 թ. նոյեմբերի 6-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի**

ՀՀ, ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 19-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Ըստ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 3.8 կետի՝ նիստը սկզբում նախագահում էին խորհրդի ամենատարեց անդամը՝ «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Արեգ Հովհաննիսյանը, իսկ քարտուղարի պարտականություններն իրականացնում էր ամենաերիտասարդ անդամը՝ ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանող Գոռ Օհանյանը: Արեգ Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ Խորհրդի բոլոր անդամներին նախապես ուղարկվել է նիստի օրակարգը:

Նախքան նիստի ներկայացված օրակարգի հաստատումը հնչեցին նոր հարցեր ներառելու վերաբերյալ առաջարկներ:

Երևանի պետական համալսարանի մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի մագիստրատուրայի ուսանող Խաչիկ Աբաջյանն առաջարկեց օրակարգում ներառել ևս երկու հարց: Մասնավորապես նա առաջարկեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության վերաբերյալ հարցը ևս քննության առարկա դարձնել, քանի որ այն սկսվել է ռեկտորի ընտրության գործընթացի հետ միաժամանակ, և երկու գործընթացներն էլ կանգ են առել իրավական նույն հիմնավորմամբ:

ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանը պարզաբանեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության հարցը նոր օրենքի նախագծով, որն արդեն օրակարգում է, կարգավորվելու է այլ ձևով, և հետագայում իրավական կազուսից խուսափելու համար հարցը չի ընդգրվել օրակարգում: ԵՊՀ ռեկտորի Ժ.Կ.-ն ասաց, որ եթե այժմ քննարկվի տնօրենի ընտրության հարցը, իսկ հետո որոշում կայացվի, որ այդ պաշտոնը նշանակովի է, խնդիր կառաջանա:

Խ. Աբաջյանը նշեց, որ նոր օրենքի նախագծով որոշակի փոփոխություններ կան նաև ռեկտորի ընտրության կարգում, և բացի դրանից՝ օրենքը գուցե կրկին չընդունվի: Նրա կարծիքով, եթե սկիզբ է դրվում ռեկտորի ընտրության գործընթացին, ապա ճիշտ կլիներ սկսել նաև ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրության գործընթացը:

Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 6, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 1:

Խ. Աբաջյանը ներկայացրեց նաև երկրորդ առաջարկը, որով նշեց, որ Խորհրդի՝ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից առաջադրված անդամներից մեկի ընտրությունն անցկացվել է կանոնակարգային խախտմամբ: Նրա խոսքով, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կողմից առաջադրված անդամ Աննա Փոլադյանի թեկնածությունը, ըստ գործող կարգի, պետք է նախևառաջ հաստատվեր ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից, ապա ներկայացվեր ԵՊՀ գիտական խորհուրդ, որն էլ կկատարեր իր ընտրությունը: Խ. Աբաջյանը նշեց, որ Ա. Փոլադյանի թեկնածությունը ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում չի քննարկվել, և միայն ԵՊՀ գիտական խորհրդի նիստից 8 օր անց հարցման կարգով հաստատվել է նրա թեկնածությունը, ինչը, ըստ ուսանողի, կանոնակարգային խախտում է: Նա առաջարկեց ներառել Ա. Փոլադյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը ներառել օրակարգում, որպեսզի ընդունված որոշումների լեգիտիմությունը հետագայում կասկած չհարուցի:

ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Փոլադյանն ասաց, որ ԵՊՀ գիտական խորհրդի ընտրության ժամանակ որևէ առարկություն տեղի չի ունեցել: Նա իր վրդովմունքը հայտնեց բարձրաձայնված հարցի վերաբերյալ և առաջարկեց նիստին ձեռնպահ մնալ մինչև հարցը կպարզաբանվի:

ՀՀ փոխվարչապետ Սուրեն Պապիկյանը նշեց, որ քանի որ այս պահին Խորհրդի անդամների համար հայտնի չէ՝ խախտում եղել է, թե ոչ, առաջարկեց, որ Հոգաբարձուների խորհուրդը հանձնարարի ռեկտորատին իրականացնել քննություն՝ պարզելու խնդիր եղել է, թե ոչ, ըստ այդմ՝ որոշում կայացնել: Նրա խոսքով, գործընկերոջ՝ ձեռնպահ մնալու առաջարկն ամբողջովին լուծում է խնդիրը:

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Մխիթար Գաբրիելյանի հնչեցրած կարծիքի համաձայն էլ պետք է լինի քննություն, բայց և պետք է առաջնորդվել այն սկզբունքով, որ այս պահին կա երկու հայտարարություն և կատարված փաստ: Նրա խոսքով, փաստն այն է, որ Աննա Փոլադյանն ունի նույն այն իրավունքները, ինչ Խորհրդի մյուս անդամները: Մխիթար Գաբրիելյանն առաջարկեց հնարավորություն տալ Աննա Փոլադյանին լիարժեք մասնակցելու քվեարկություններին, ապա իրականացնել քննություն, և ըստ դրա՝ ընդունել որոշումներ:

ԵՊՀ ՈԻԽ նախագահ Դավիթ Ափոյանը հետաքրքրվեց, թե բարձրաձայնված հարցի վերաբերյալ մասնագիտական ինչ կարծիք ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը, և արդյոք հետագայում իրավական խնդիր չի առաջանա, եթե պարզվի, որ Ա. Փոլադյանի առաջադրումը կանոնակարգային խատիմամբ է տեղի ունեցել: Բացի դրանից՝ նա ասաց, որ Խորհրդի անդամ, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թոչունյանը ևս ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ է և կարող է հաստատել կամ հերքել բարձրաձայնված հարցը:

Ե. Կիրակոսյանն ասաց, որ նախևառաջ պետք է պարզել խնդիրը: Նա ասաց, որ անդամի ձեռնպահ մնալու տրամաբանությունն ընդունելի է, քանի որ եթե անգամ անդամը քվեարկությանը մասնակցի, իրավական լուրջ խնդիր չի առաջանա, քանի որ խոսքը մեկ ձայնի մասին է: Նրա խոսքով խնդիր կառաջանար, եթե ձայնը որոշիչ լիներ: Նա առաջարկեց ընդունել ձեռնպահ մնալու առաջարկությունը, հետագայում պարզել հարցը, ապա նոր միայն որոշում կայացնել: Քվեարկության դրվեց հարցը օրակարգում ներառելու Խ. Աբաջյանի առաջարկությունը. կողմ՝ 5, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 6:

Այնուհետև քվեարկության դրվեց հանձնաժողով ստեղծելու առաջարկը, որը կքննի բարձրաձայնված հարցը և կզեկուցի Խորհրդին. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Դ. Ափոյանը տեղեկացրեց, որ վստահ է՝ առաջադրումը խախտմամբ է տեղի ունեցել, և առաջարկեց այն գործընկերներին, որոնք ևս այդպես են մտածում, չմասնակցել քվեարկություններին: Եղիշե Կիրակոսյանն ասաց, որ առաջարկությունը փոքր-ինչ անտրամաբանական է, քանի որ եթե անգամ անդամի ընտրությունը տեղի է ունեցել ոչ ճիշտ կարգով, այուամենայնիվ Խորհուրդն իրավագոր է և կարող է գործել լիիրավ:

Այնուհետև քվեարկության դրվեց նիստի օրակարգն այն ձևով, որը ներկայացվել էր նախապես. կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

1. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:
2. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:
3. ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի նախկինում հայտարարված մրցույթի չեղարկում:
4. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի վերանայում (համապատասխանեցում բուհի կանոնադրությանը): Նախագիծը կցվում է:
5. ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարում:
6. Այլ հարցեր:

1. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն: ՀՀ վարչապետի օգնական Նաիրի Սարգսյանն առաջադրեց ՀՀ փոխվարչապետ Սուրեն Պապիկյանի թեկնածությունը՝ նշելով, որ վերջինս ունի հարուստ կենսագրություն, ինչպես նաև փորձ մանկավարժության և կառավարման ոլորտներում:

Ս. Պապիկյանը նշեց, որ ավարտել է ԵՊՀ-ն, համալսարանական է, կարող է և պատրաստ է իր ներդրումն ունենալ համալսարանի զարգացման գործում՝ փաստելով, որ իր համար մեծագույն պատիվ է ստանձնել այս պաշտոնը: Սուրեն Պապիկյանն իր ելույթի ժամանակ ասաց, որ իր կարծիքով, ԵՊՀ-ի այսօրվա դերը և հնարավորությունները չեն համապատասխանում իրար, և պետք է ամեն ինչ անել, որ վերականգնվի համալսարանի երբեմնի փառքը: Նա ասաց, որ կարող են ստեղծել այնպիսի մթնոլորտ, որը կապահովի բուհի բնականոն զարգացումը, որի համար ևս պատրաստ է ներդնելու իր բոլոր հնարավորությունները:

Ս. Պապիկյանին հարց ուղղեց ԵՊՀ ՌԻԽ նախագահ Դ. Ափոյանը: Նա ասաց, որ նրանց քաղաքական թիմի կողմից բազմիցս հնչել են հայտարարություններ, թե բուհի ՀԽ նախագահը չպետք է լինի կուսակցական մարդ, և հետաքրքրվեց, թե չկա արդյոք հակասություն, քանի որ Ս. Պապիկյանը ՔՊ կուսակցության վարչության նախագահն է, և ուսանողների շրջանում էլ հարց կառաջանա, թե նրա ընտրությամբ արդյո՞ք կլուծվի ապաքաղաքականացման հարցը: Ի պատասխան՝ Ս. Պապիկյանն ասաց, որ լիազոր մարմինն այսօր էլ իր օրակարգում այդ հարցը չի փակել: Նա հիշեցրեց, որ իրենց քաղաքական թիմը շրջանառության մեջ էր դրել օրենքի նախագիծ, որը բացառելու էր այդ խնդիրները: Սակայն, նրա խոսքով, դրա դեմ բողոքներ հնչեցին, տարբեր ակցիաներ կազմակերպվեցին, ինչի արդյունքում օրենքի փաթեթը ճանաչվեց հակասահմանադրական: Ս. Պապիկյանն ասաց, որ իհարկե նոր օրենքով կարելի է այդ հարցը կարգավորել, և որ լիազոր մարմինն առաջնորդվում է հենց այդ քաղաքականությամբ: Ս. Պապիկյանն ասաց, որ այժմ առաջնորդվում են ՀՀ գործող օրենսդրությամբ, և կառավարությունը, դրա համաձայն, պետք է ներկայացնի թեկնածուներ: Բացի դրանից, նրա պնդմամբ, հարիր է, որ ՀՀ կառավարությունը ԵՊՀ-

ին վերաբերվի ամենաբարձր պատասխանատվությամբ, ինչի վառ ապացույցը հանրապետության երկրորդ պաշտոնյային այս պաշտոնում առաջադրելն է: Սուրեն Պապիկյանը փաստեց, որ երբ տեղի ունենա օրենսդրության փոփոխություն, ինքը մեծ սիրով կշարունակի իր գործունեությունը ՀԽ-ից դուրս, նա շեշտեց, որ ամեն ինչ անելու է, որ ԵՊՀ-ն քաղաքական հարթակ չլինի, նպաստելու է, որ ՈԻԽ-ն ապաքաղաքական լինի, որ պրոֆեսորադասախոսական կազմն իր գործունեության ընթացքում չնպաստի որևէ կուսակցության արմատավորմանը ԵՊՀ-ում: Նա ասաց, որ իր ներկայությունը ՀԽ-ում նպատակ ունի նպաստելու բարոյահոգեբանական մթնոլորտի կայացմանը և բուհի առաջընթացին:

Ս. Պապիկյանին հարցեր ուղղեց նաև «Հայաստանի հանրային հեռուստարձևերություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանը: Նա հետաքրքրվեց, թե կարող են ակնկալել հատուկ ուշադրություն ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի և ժուռնալիստական կրթության հանդեպ, քանի որ այսօր դաշտում խնդիր կա, կան որակական լուրջ խնդիրներ, որոնք ունեն իրենց պատճառները: Նա նշեց, որ ժուռնալիստիկայի ֆակուլտետում չկան տեխնիկական տարրական միջոցներ և նման այլ խնդիրներ: Նա նաև հետաքրքրվեց, թե նրա պաշտոնը կարո՞ղ է օգնել ԵՊՀ-ին:

Ի պատասխան՝ Ս. Պապիկյանն ասաց, որ իր ունեցած կարգավիճակը կարող է օգնել ԵՊՀ-ին, և այնպես չէ, որ նախկինում, երբ ՀԽ անդամ չէր, խոչընդոտում էր, բայց այժմ անմիջականորեն առաջին ձեռքից կարող է ստանալ տեղեկատվություն և մասնակցել խնդիրների լուծմանն ու կարգավորմանը:

Ինչ վերաբերում է լրագրության և ֆակուլտետին հատուկ ուշադրություն դարձնելու հարցին, ՀՀ փոխվարչապետն ասաց, որ ոչ միայն այդ, այլև բոլոր ուղղությունների զարգացման վերաբերյալ հարցերին պետք է պատասխանեն ռեկտորի ապագա թեկնածուները, միասին քննարկեն:

Ս. Պապիկյանին հարց ուղղեց Խ. Աբաջյանը՝ հետաքրքրվելով, թե ընտրվելու դեպքում ինչպե՞ս է պատկերացնում ՀԽ աշխատանքը, մասնավորապես նիստերի հաճախ անցկացումն ու աշխատանքների ընթացքը:

Ս. Պապիկյանն ասաց, որ աշխատանքները կիրականացվեն՝ ըստ անհրաժեշտության՝ կախված ԵՊՀ կանոնակարգից, ընդունված աշխատակարգից և օրակարգում առկա հարցերից ու դրանց հրատապությունից: Նա ասաց, որ հաշվի առնելով համաճարակային իրավիճակը՝ կարող են գումարվել նաև առցանց նիստեր:

**Սուրեն Պապիկյանին ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրելու առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:**

## Որոշվեց.

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել ՀՀ փոխվարչապետ Սուրեն Պապիկյանին:

2. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կ. Թոչունյանն առաջադրեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանի թեկնածությունը:

Ե. Կիրակոսյանն ասաց, որ ուրախությամբ պատրաստ է ստանձնել այս պաշտոնը և հույս հայտնեց, որ իր կրթությամբ և փորձառությամբ կնպաստի համալսարանի վարկանիշի բարձրացմանը և միջազգային ճանաչելիությանը: Նա ասաց, որ փորձառությամբ մոտ է եղել կրթական հաստատությունների հետ աշխատանքին, նաև աշխատել է տարբեր հիմնադրամներում, պատկերացնում է իրավական կարգավորումների առանձնահատկությունները, որոնք վերաբերում են թե՛ կրթական հաստատություններին, թե՛ հիմնադրամներին՝ որպես կազմակերպաիրավական ձև: Բացի դրանից՝ նա ասաց, որ պատիվ է լինել Խորհրդի կազմում՝ լինելով ԵՊՀ շրջանավարտ, և հույս հայտնեց, որ Խորհուրդը կնպաստի համալսարանի վարկի բարձրացմանը և միջազգային մասշտաբով ճանաչելի դարձնելուն: Նա վստահեցրեց, որ համալսարանն ունի այդ ներուժը, և ճիշտ ուղղորդման դեպքում կարող է կարճ ժամանակում մեծ արդյունքների հասնել:

Ե. Կիրակոսյանին հարց ուղղեց ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ասպիրանտ Հասմիկ Վարդումյանը՝ հետաքրքրվելով, թե նա ինչպե՞ս է պատկերացնում Խորհրդի աշխատանքը, մասնավորապես՝ պատկերացնո՞ւմ է հանձնաժողովների աշխատանք կամ որոշ անդամների հետ թիրախային աշխատանքներ:

Ի պատասխան՝ Ե. Կիրակոսյանն ասաց, որ նիստը Խորհրդի հիմնական աշխատաձևն է, որի շրջանակում քննարկվում են հարցեր և կայացվում որոշումներ, բայց չբացառեց նաև նիստերից դուրս հանդիպումների անցկացումը:

Եղիշե Կիրակոսյանին ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղարի պաշտոնում ընտրելու առաջարկությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

## Որոշվեց.

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանին:

3. ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի նախկինում հայտարարված մրցույթի չեղարկում: Արդեն ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Ս. Պապիկյանն ասաց, որ ԵՊՀ-ի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտություն կա նախ չեղարկելու հայտարարված նախորդ մրցույթը, ապա հայտարարելու նորը:

Ս. Գաբրիելյանը հետաքրքրվեց, թե ի՞նչ հիմքով և ի՞նչ ձևակերպմամբ է չեղարկվում հայտարարված նախորդ մրցույթը, ինչին ի պատասխան՝ Եղիշե Կիրակոսյանն ասաց, որ Խորհրդի իրավասության ներքո է չեղարկել մրցույթը, և այդ հարցով իրավական որևէ խնդիր չկա: Նրա խոսքով, տրամաբանությունն այն է, որ հայտարարված մրցույթը փաստացի տեղի չի ունեցել, և այժմ հայտարարվում է նոր մրցույթ, որը, ըստ էության, ոչ մեկի իրավունքները չի սահմանափակում՝ դիմելու նոր մրցույթին: Եղիշե Կիրակոսյանի խոսքով, փոփոխվել են նաև թեկնածուների ներկայացվող պահանջները, և ըստ այդմ՝ պետք է նոր կարգ հաստատվի, ու նոր մրցույթ հայտարարվի: Բացի դրանից, նրա խոսքով, այս ընթացքում փոխվել է նաև ԵՊՀ կանոնադրությունը, և նոր կարգը պետք է համապատասխանեցվի դրան: Այսինքն, նրա դիտարկմամբ, մրցույթի չեղարկումը նաև օրենքի պահանջ է:

Ս. Գաբրիելյանն առաջարկեց հաջորդ նիստերից առաջ որոշումների նախագծերը ևս ուղարկել ՀԽ անդամներին:

Կ. Թռչունյանն էլ տեղեկացրեց, որ փոփոխություններ են տեղի ունեցել ոչ միայն ԵՊՀ, այլև բոլոր բուհերի կանոնադրությունների մեջ: Նրա խոսքով, նորմը վատթարացնող չէ և չի խախտում այն մարդկանց իրավունքները, որոնք դիմել էին մրցույթին. նրանք կարող են կրկին դիմել: Իսկ որոշման նախագծի վերաբերյալ Կարեն Թռչունյանը նշեց, որ ռեկտորի ընտրության կարգը և փոփոխությունների որոշման նախագիծն ուղարկվել է ՀԽ բոլոր անդամներին:

**ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի նախկինում հայտարարված մրցույթի չեղարկման հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

**Որոշվեց.**

**Չեղարկել ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի նախկինում հայտարարված մրցույթը:**

4. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի վերանայում (համապատասխանեցում բուհի կանոնադրությանը): Ս. Պապիկյանն ասաց, որ նախագիծը նախապես ուղարկվել է ՀԽ անդամներին: Խ. Աբաջյանը հետաքրքրվեց, թե ինչո՞վ է պայմանավորված 40-օրյա ժամկետի փոխարեն 30-օրյա ժամկետի սահմանումը,

ապա առաջարկեց, որ եթե որոշումն ընդունվում է, ապա փոփոխել նաև կանոնակարգի 2.5 կետը, և 15 օրվա փոխարեն սահմանել 10 օր, և նույն տրամաբանությամբ էլ առաջարկեց փոփոխել 2.11 կետը, և 10 օրը դարձնել 8 օր:

Ս. Պապիկյանը պարզաբանեց 30-օրյա ժամկետ սահմանելու հիմքը՝ նշելով, որ դա արվում է արագության համար:

ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վարուժան Աթաբեկյանն ասաց, որ նախագծով առաջարկվում է կանոնակարգի 3.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «3.2 ԵՊՀ ռեկտոր կարող է առաջադրվել այն անձը, որն ունի գիտական աստիճան և առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ», սակայն, նրա դիտարկմամբ, 2.4 կետով պահանջվում է, որ ռեկտորի թեկնածուն ներկայացնի դոկտորի գիտական աստիճանի պատճենը. կա անհամաձայնություն: Նա առաջարկեց այդ կետը ևս փոփոխել:

Կ. Թոչունյանն ասաց, որ պետք է համապատասխանեցվի կանոնադրությանը, և եթե կա խնդիր, պետք է այդ կետը ևս փոփոխվի՝ սահմանելով, որ պետք է ներկայացնել գիտական աստիճանը հավաստող վկայականի պատճենը: Նրա պնդմամբ, կանոնակարգի բոլոր այն կետերը, որոնք չեն համապատասխանում կանոնադրությանը, պետք է փոփոխվեն ու համապատասխանեցվեն:

**ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի վերանայման հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:**

## **Որոշվեց.**

1. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգը համապատասխանեցնել ԵՊՀ կանոնադրությանը:
2. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.4 կետում «և պրոֆեսորի գիտական կոչումը հավաստող վկայականների պատճենները» բառերը փոխարինել «հավաստող վկայականի պատճենը և առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժը հավաստող փաստաթղթեր (աշխատանքային գրքույկի պատճեն կամ տեղեկանք աշխատանքի վայրից)» բառերով,
3. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի 3.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «3.2 ԵՊՀ ռեկտոր կարող է առաջադրվել այն անձը, որն ունի գիտական աստիճան և առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ»,
4. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.2 կետում «առնվազն 40 օր» բառերը փոխարինել «առնվազն 30 օր» բառերով,



5. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.5 կետում «15 օր առաջ» բառերը փոխարինել «10 օր բառերով»,
6. ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.11 կետում «առնվազն 10 օր առաջ» բառերը փոխարինել «առնվազն 8 օր առաջ» բառերով:

5. ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարում: Կարեն Թոչունյանն առաջարկեց ԵՊՀ ռեկտորի ընտրության օր նշանակել դեկտեմբերի 17-ը:

Սույն թվականի դեկտեմբերի 17-ին ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի մրցույթ անկացնելու առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Այնուհետև Ս. Պապիկյանն ասաց, որ պետք է սահմանել նաև մրցույթի հայտարարման օրը, որը, Խ. Աբաջյանի և Կ. Թոչունյանի հավաստմամբ, ըստ կարգի, իրականացվում է մրցույթից 30 օր առաջ: Ս. Պապիկյանն առաջարկեց քվեարկել հարցը:

Դեկտեմբերի 17-ից 30 օր առաջ ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

**Որոշվեց.**

1. Սույն թվականի դեկտեմբերի 17-ին անցկացնել ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի մրցույթ:
2. Դեկտեմբերի 17-ից 30 օր առաջ հայտարարել ԵՊՀ ռեկտորի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասին:

6. Այլ հարցեր: ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանն ասաց, որ այս ընթացքում կուտակվել են բազմաթիվ հարցեր, և խնդրեց Խորհրդին հնարավորություն ստեղծել հարցման կարգով անդրադառնալու այդ հարցերի մի մասին: Ի պատասխան՝ Սուրեն Պապիկյանն ասաց, որ առարկություն չկա:

**Խորհրդի նախագահ՝**

**Ս. Պապիկյան**

**Խորհրդի քարտուղար՝**

**Ե. Կիրակոսյան**